ՀՏԴ 008+321.7(479.25)

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
փիլիսոփայության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԻՎԱՆԴ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ԱԽՏՈՐՈՇՈՒՄԻՑ ԴԵՊԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է հայ հասարակության համակարգային օտարման հայեցակարգային վերլուծությանը: Բացահայտված է այն անվիճելի իրողությունը, որ նախորդ իշխանությունների օրոք քաղաքական օտարվածության տրամադրությունները տարածվել էին ոչ միայն գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների, այլ նաև հիմնական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների վրա, այդ թվում՝ հիմնական տնտեսական ինստիտուտների և բիզնեսի վրա: Դրանց հաղթահարման համար հեղինակը մշակել և առաջադրել է Հայաստանի վերարդիականացման կամ, որ նույնն է, առողջացման նոր տրամաբանություն կամ նախագիծ: Այսինքն՝ Հայաստանի վերարդիականացման ազգային-ժողովրդավարական մոդել, որն ամբողջովին կողմնորոշված է դեպի հայրենասիրության, ժողովրդավարության և սոցիալական արդարության արժեքները, մատնանշում է դրանց հաստատման գործում Հայաստանի նոր իշխանությունների կարևոր դերակատարությունը: Մոդելի կենսագործումը նախատեսում է հայ հասարակության առողջացմանն ուղղված միջոցառումների մի ողջ համակարգ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *օտարում, սոցիալական արդարություն, պետական կառավարման գաղափարախոսություն, ուղղաձիգ շարժունություն, մերիտոկրատիա, մասնակցային ժողովրդավարություն, ներազգային երկխոսություն*

Հայաստանի նախորդ իշխանությունների նկատմամբ խորը անվստահության տրամադրություններ արձանագրվել է դեռևս 2001թ.: Հարցվածների մեծամասնությունը չէր վստահում Հայաստանի քաղաքական համակարգի գրեթե բոլոր ինստիտուտներին, ընդ որում՝ նվազելու փոխարեն անվստահությունը գնալով ուժեղանում էր [1]:

Մեկ այլ ներկայացուցչական հարցման տվյալներով՝ հարցմանը մասնակցած հայերի 74.6 տոկոսը չէր վստահում օրենսդիր իշխանությանը, 76 տոկոսը դատական իշխանությանը, 73,6 տոկոսը կառավարությանը[2]: Հայաստանի սոցիոլոգիական ասոցիացիայի կողմից անցկացրած հարցումը ցույց էր տվել, որ հարցվածների միայն 1,8 տոկոսն էր համաձայն, իսկ 18,8 տոկոսը՝ ինչ-որ չափով համաձայն, որ դատարաններում որոշումներն ընդունվում են արդար և օրենքներին համապատասխան: Հարցվածների 69,2 տոկոսը պատասխանել էր, որ նույնիսկ մարդկանց միջև վեճ ծագելիս չի վստահում իր խնդրի լուծումը դատարանին[3] :

Իշխանության թևերի գործունեությանը տրված ցածր գնահատականը հանգեցրել էր նաև հիմնական քաղաքական կուսակցությունների գործունեության ցածր գնահատականին: Ինչպես ցույց են տվել դեռևս 2003 թվականին անցկացված հարցումների արդյունքները, բնակչության 67,6 տոկոսը չէր վստահում կուսակցություններին: Լրիվ կամ մասնակիորեն վստահում էր մոտ 16,2 տոկոսը[4]: Հասարակական հարցումների արդյունքներով՝ երկրի մեծահասակ բնակչության ոչ լրիվ 5 տոկոսն էր իրեն որևէ կուսակցության գաղափարակիր համարում[5] :

Հարցումները վկայում էին հայ հասարակության տարբեր խմբերի ներկայացուցչության քաղաքական մեխանիզմների հիմնախախտվածության, ներկուսակցական ժողովրդավարության էական թուլացման մասին: Պատգամավորները, որոնք առերևույթ համարվում էին որոշակի սոցիալական խմբերի ներկայացուցիչներ, իրականում փոխակերպվել էին կուսակցական ապարատի ներկայացուցիչների, կյանքի կոչելով «կուսապարատի ներկայացուցիչների ներկայացուցչության» հոռի երևույթը:

Նախ, թե ով կդառնա ԱԺ-ի պատգամավոր, հիմնականում կանխորոշված էր: Իհարկե, Հայաստանում ընտրությունները ձևականորեն ընտրողների կամարտահայտությունն էին, սակայն դրանք ունեին առանձնահատուկ բնույթ, որը բանաձևելուց հետո ստանում էր հետևյալ տեսք՝ ձեր փոխարեն մենք արդեն ընտրել ենք, իսկ դուք՝ հայ ընտրողներ, պետք է ընդամենը հաստատեք այն: Երկրորդ, Հայաստանում նախորդ իշխանությունների օրոք գործառում էր, այսպես կոչված, փակ ցուցակների արատավոր պրակտիկան, որը լայնորեն կիրառվում էր խորհրդարանական ընտրություններում: Շարքային ընտրողը քվեարկում էր թեկնածուների ցուցակի համար, որոնք առաջադրվել էին կուսակցությունների կողմից: Պատգամավորության թեկնածուների ազգանունների հերթականությունը որոշվում էր կուսակցական ապարատի կողմից և փոփոխման ենթական չէր: Կարելի էր քվեարկել միայն ողջ ցուցակի համար, ընդսմին՝ ցուցակի մեջ հնարավոր չէր ավելացնել նոր ազգանուններ: Արդյունքում՝ պատգամավորության թեկնածուների մեծամասնությունն անհայտ էր մնում հայ ընտրողին: Թեկնածուները գիտեին, որ իրենք, փաստորեն, ոչ մի զանգվածային սոցիալական խումբ չէին ներկայացնում: Հետևաբար, ըստ էության, չունեին քաղաքական լեգիտիմություն, որն անհրաժեշտ է խորհրդարանում սոցիալական ներկայացուցչության և կուսակցական բյուրոկրատական ընտրանուն հակազդելու համար: Նախորդ իշխնությունների օրոք Հայաստանը դարձել էր «կառավարվող» ժողովրդավարության ցայտուն օրինակ: Հայ ժողովուրդը դե-յուրե իշխանության աղբյուրից դե-ֆակտո վերածվել էր բյուրոկրատական ձեռնածությունների օբյեկտի:

Իշխանություններից համակարգային օտարվածության կամ, որ նույնն է, վստահության համընդհանուր ճգնաժամի վիճակը շատ-շատերի մոտ վերաճել էր խոր անվստահության՝ ցանկացած համազգային ընդվզումի գործողության նպատակահարմարության նկատմամբ: Ավելին, հայ հասարակության բազմաքանակ սոցիալական խավերի գիտակցության մեջ վերաճել էր այն համոզման, թե, իբր, իրենք անկարող են արմատականորեն և դեպի լավը բա-

րեփոխել, ինչպես երկրում տիրող վիճակը, այնպես էլ սեփական կյանքի հանգամանքները:

Քոչարյանա-սարգսյանական հանցավոր վարչակարգի օրոք շարքային հայերին ներհատուկ դժգոհության և բողոքի տիպական վիճակները որոշվում էին հիմնականում սոցիալական հույզերով, դրանց արագ վերելքներով և անկումներով, մի ծայրահեղությունից մյուսին չպատճառաբանված անցումներով: Այսպիսին էր սոցիալական հույզերի և բողոքի քաղաքական տրամադրությունների «պլազմային» այն վիճակը, որը գտնվում էր մշտական խմորման, փոփոխության և փոխակերպման մեջ: Դրանք վկայում էին հայ զանգվածների քաղաքական էներգիայի ապակենտրոնացվածության մասին, որի սահմանափակությունն այն էր, որ բողոքի տրամադրությունների աճը չէր հենվում վստահության ճգնաժամից դուրս գալու ռազմավարության, բոլոր հայերին հասկանալի ինչ-որ հստակ ըմբռնումի կամ պատկերացման վրա: Զանգվածային հայը, թեև դժգոհ, խորապես հիասթափված էր իշխանություններից, սակայն չուներ քաղաքական գործողությունների ծրագիր, որովհետև այլընտրանք չէր տեսնում:

Հայաստանի առկա վիճակի վերլուծությունը մեզ բերել է այն եզրահանգման, որ այլևս չի կարելի բավարարվել «գոյատևման ռազմավարությամբ» կամ «ծակ ու ծուկերը մասնակիորեն կուտակելու մեթոդաբանությամբ»: Մեզ անհրաժեշտ է համազգային ծրագիր, որը մարդկանց վաղվա օրվա նկատմամբ հույս կներշնչի և կկողմնորոշի դեպի ապագան:

Մեր ուսումնասիրությունները մեզ թույլ են տվել հիմնավորել և առաջադրել Հայաստանի վերարդիականացման ազգային-ժողովրդավարական մոդելը, որն ամբողջովին կողմնորոշված է դեպի հայրենասիրության, ժողովրդավարության և արդարության արժեքները, մատնանշում է դրանց հաստատման գործում ազգային պետության վճռորոշ դերակատարությունը: Հասունացել է ռազմավարական շրջադարձը դեպի Հայաստանի «ներքևից» վերարդիականացումը, որը պետք է հենվի հետևյալ սկզբունքների վրա.

1. <u>Զարգացման սոցիալականացումը</u>, որը պահանջում է հենվել Հայաստանի մարդկային և սոցիալական կապիտալի վրա, ստեղծել աշխատասիրության, սոցիալական ակտիվության և ձեռներեցության աճի համար բարենպաստ հնարավորություններ:
2. <u>Ազգային համախմբումը՝ ազգային երկխոսության միջոցով</u>, որը կապահովի հայկական պետության և հասարակության կողմից տարբեր խավերի և խմբերի շահերի համաձայնեցումը, երկրի առաջնային շահերին, նրա դինամիկ և օրգանական զարգացման հրամայական պահանջներին մասնավոր շահերի համապատասխանությունը:
3. <u>Ժողովրդավարությունը (դեմոկրատիզմ)</u> պահանջում է անշեղորեն հետևել հասարակական կյանքում քաղաքականապես ներկայացված բնակչության մեծամասնության պահանջներին, հարգել փոքրամասնության շահերը, հաշվի առնել վերջինիս շահերը:
4. <u>Իրատեսությունը</u> պահանջում է հենվել առկա և հնարավորինս մատչելի նյութական ու սոցիալական ռեսուրսների վրա, համակողմանիորեն հաշ-

վի առնել ազգային պետության և հասարակության զարգացման ռեալ ինստիտուցիոնալ պայմանները:

5. Պատմականությունը և ժառանգորդվածությունը պահանջում է հաշվի առնել Հայաստանի, նրա ժողովրդի պատմական և մշակութային ավանդույթները, արժեքներն ու առանձնահատկությունները:

6. Ժողովրդայնությունը՝ խորապես հասկանալ և հարգել հայկական հոգեկերտվածքի բնույթը, նրա նորմերն ու ավանդույթները, առօրեական բարոյականության արժեքները, որոնցով առաջնորդվում է Հայաստանի բնակչության մեծամասնությունը:

7. Պետության ազգային պատասխանատվությունը՝ պետությունը պետք է հստակ գիտակցի իր պատասխանատվությունը մեր հայրենիքի ճակատագրի համար, պետք է անհատ քաղաքացիների մասնավոր շահերը ներդաշնակորեն համախմբի երկրի զարգացման ազգային առաջնահերթությունների համակարգի մեջ:

Վերոնշյալ սկզբունքների իրագործման հաջողությունը պահանջում է կառուցել Հայաստանի ազգային-ժողովրդավարական վերարդիականացման նոր տրամաբանություն՝ հիմնված մեր երկրի առաջ ծառացած իսկական հիմնախնդիրների ռացիոնալ (բանական) իմաստավորման վրա: Առաջին քայլը՝ ակտիվ ազգային երկխոսությունն է մեր կենսական կնճիռների ու խնդիրների շուրջ: Երկխոսության ընթացքում պետք է բացահայտվեն հիմնական սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնք պայմանավորում են Հայաստանի վերարդիականացման առաջնահերթություններն ու շրջանակները:

Մոդելի իրականացումն ենթադրում է միջոցառումների լայն ծրագիր.

Տնտեսության ոլորտում՝ էապես բարձրացնել տնտեսության պետական կարգավորման արդյունավետության մակարդակը, ապահովել մասնավոր սեփականության և պայմանագրային հարաբերությունների ինստիտուտի, ինչպես նաև տնտեսական ազատ մրցակցության զարգացումը: Լիարժեք մրցակցային շուկան գործում է միայն այն ժամանակ, երբ սեփականության իրավունքը պաշտպանված է օրենքով և համապատասխան ինստիտուտներով, որոնք ապահովում են նրա բնականոն գործառնությունը և զարգացումը:

Իրավաքաղաքական ոլորտում՝ նախ ամրապնդել զսպումների և հակակշիռների համակարգը պետական իշխանության ճյուղերի միջև,բարձրացնել դրանց օրգանական փոխգործակցության արդյունավետությունը: Երկրորդ, ապահովել օրենքի գերակայությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ օրենքը վեր է ցանկացած հեղինակությունից, ցանկացած անձնավորությունից, և որ օրենքի մեկնաբանությունը տրվում է միայն անկախ դատարանի կողմից: Առհասարակ, անհրաժեշտ է էապես վերափոխել իրավակիրառական պրակտիկան, ամրապնդել ժողովրդավարական իրավակարգը: Երրորդ, որակապես ընդլայնել իշխանության ներկայացուցչական մարմինների լիազորությունները, արդիականացնել Հայաստանի գործադիր իշխանության կառուցվածքը՝ պետական որոշումների մշակման գործընթացի նկատմամբ քաղաքացիական ինստիտուտների հասարակական վերահսկողության ապահովման նպատակով:

Չորրորդ, ստեղծել պայմաններ՝ միջկուսակցական մրցակցության ծավալման և զարգացման համար: Կուսակցությունները պետք է իրական հնարավորություն ունենան պայքարելու քաղաքական իշխանության իրավունքը նվաճելու համար՝ հայ հասարակությանն առաջադրելով համազգային ծրագրեր և լիդերներ: Անհրաժեշտ է կատարելագործել իշխանության փոխելիության, ազատ ընտրությունների անցկացման մեխանիզմները: Վերջապես, անհրաժեշտ է մշակել պետական կառավարման նոր մոդել, արդյունավետության, թափանցիկության, հայ հասարակությանը պարբերական հաշվետվության ժողովրդավարական սկզբունքներով և մեխանիզմներով: Խոսքը պետական կառավարման այնպիսի համակարգի մասին է, որը պետք է հիմնվի իշխանության ճյուղերի, բիզնես-ընտրանու, կուսակցությունների, ակադեմիական և ճյուղային գիտության, հասարակական կազմակերպությունների ազգանպաստ համագործակցության վրա:

Քաղաքական առողջ մրցակցությունը, պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հակակշիռների գործուն համակարգը, օրենքի գերակայությունը, իշխանությունների փոխելիությունը՝ այդ ամենը կազմում է իշխանություններից, կուսակցություններից, և հասարակական կազմակերպություններից հայ հասարակության համակարգային օտարացածության մեղմացման կամ աստիճանական հաղթահարման քաղաքական տրամաբանությունը: Պահանջվում է վճռականորեն փոխել իշխանության բովանդակությունը և հռետորաբանությունը: Դրա անհրաժեշտությունը թելադրվում է նույնիսկ ոչ այնքան Հայաստանի վերարդիականացման ազգային-ժողովրդական նախագծի պահանջներով, որքան երկրի կենսական հիմնախնդիրների լուծման ոլորտում առաջացող նորանոր դժվարություններով: Այլ ելք չունենք. հարկավոր է կառավարմանը վերադարձնել պրոբլեմային մոտեցումը, որը կապված է երկրի առաջ ծառացած հիմնախնդիրների և հակասությունների լուծման իրատեսական ուղիների հայեցակարգային իմաստավորման հետ: Հարկավոր է կառավարական որոշումներ կայացնելիս նախապես հաշվել դրանց հետ կապված ծախսերի և օգուտների հստակ հաշվեկշիռը: Միայն այդ դեպքում կկարողանանք խուսափել «Չեռնոմիրդինի նզովքից». «ցանկանում էինք որքան կարելի է լավ, իսկ ստացվեց ինչպես միշտ»:

Եթե վարչապետ Նիկոլ Փաշինյանին հաջողվի վերակառուցել հայկական պետության և քաղաքացիական հասարակության հարաբերությունները, փոխել պետկառավարման բովանդակությունը, ապա մյուս բոլոր հարցերն անհամեմատ ավելի հեշտ կլուծվեն:

Այսօր Նիկոլ Փաշինյանի կառավարությունը ձևավորվում է նոր քաղաքական օրակարգ, որը ներառում է ոչ միայն երկրի ներսում կայունության պահպանումը, այլև բարեփոխումների անցկացումը, նախևառաջ հենց սոցիալական ոլորտում: Այլևս անհնար է լռության մատնել սոցիալական հիմնախնդիրները, իսկ համապատասխան իրավաքաղաքական վերափոխումները հետաձգել, քանի որ այն կարող է դառնալ կառավարման համակարգի լեգիտիմության ճգնաժամի պատճառ: Սոցիալական հիմնախնդիրների տրամաբանությունը ցույց է տալիս, որ քաղաքական կայունության պահպա-

նումն այլևս հնարավոր չէ առանց սոցիալական արդարության խնդիրների լուծման:

Հետխորհրդային հայ հասարակության համար առավել նախընտրելի է արդարության սոցիալ-դեմոկրատական հայեցակարգը կամ մոդելը: Այդ մոդելն առաջադրում է մի շարք խնդիրներ: Նախ, մարդու բարոյական իրավունքը՝ ինքնուրույնաբար և առանց անհարկի միջամտության տնօրինելու սեփական կյանքը: Պաշտպանում է բարոյական ինքնավարության սկզբունքը, որը համարում է անհամատեղելի պետության համընդգրկուն պատերնալիստական գործառույթների հետ: Երկրորդ, ապահովում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավական երաշխիքներ և նվազագույնի հասցնում պետության միջամտությունը միջանձնական հարաբերություններին: Տեսական առումով, առաջադրվում է հիմնարար իրավունքների սխեմայի մշակման խնդիրը, իսկ գործնականում՝ պետության դրական գործառույթները հանգեցնում են այդ իրավունքների պահպանմանն ու պաշտպանությանը: Երրորդ, արդարության սոցիալ-դեմոկրատական հայեցակարգն առանձնահատուկ կերպով է մեկնաբանում իրավունքը: Իրավունքը մշակվում է անհատների կոնկրետ պահանջմունքների ու շահերի հիման վրա: Խոսվում է ոչ այնքան իրավունքի մասին ընդհանրապես, որքան ճյուղավորված իրավական համակարգի, կամ, որ նույնն է, ռեալ իրավունքների ու ազատությունների ամբողջության մասին:

Արևմուտքում արդարության սոցիալ-դեմոկրատական հայեցակարգը պաշտպանում է այնպիսի պետության գաղափարը, որը պաշտպանելով ազատական գաղափարախոսության կողմից ձևակերպված հիմնական արժեքները, միաժամանակ խուսափում է նրա ծայրահեղություններից: Ըստ այդ դիրքորոշման՝ ժամանակակից պետությունը պետք է կողմնորոշված լինի դեպի այնպիսի սոցիալ-քաղաքական արժեքներն, ինչպիսիք են ազատությունը, արդարությունը, հավասարությունը և համերաշխությունը: Եվ, երկրորդ, այդ հայեցակարգի համաձայն՝ ազատությունն, իսկն ասած, քաղաքական հարկադրանքից ազատ լինելու, ըստ իր անձնական նպատակների և անհատական հնարավորությունների գործելու իրավունքն է: Արդարությունը՝ իրավունքների և հնարավորությունների հավասարությունն է՝, սոցիալական անհավասարության դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը, կապիտալից և քաղաքական իշխանությունից անկախության իրավունքը: Հավասարությունը՝ մարդկանց հավասարությունն է և անհատի ազատ զարգացման իրավունքը: Համերաշխությունը ձգտումն է՝ միաբանվել ազգային ընդհանրությանը, միանալ անարդարության զոհերի նկատմամբ կարեկցությանը:

Սոցիալ-տնտեսական գործընթացներում պետության առանձնահատուկ դերակատարության ճանաչումը զուգակցվում է անհատական ինքնավարության և անհատական իրավունքների պաշտպանությամբ: Այլ կերպ ասած, սոցիալ-դեմոկրատական և ազատական մոտեցումներն ավելի շուտ մեկը մյուսին լրացնում են, քան միմյանց հակասում: Արդի հայ հասարակությունը արդեն պատրաստ է արդարության, արդար զարգացման սոցիալ-դեմոկրատական ընբռնմանը: Այն հիմնված է, նախ, սոցիալապես անապահով խավերի

երաշխավորված ապահովության սկզբունքի վրա: Դա նշանակում է, որ Հայաստանի անապահով, աղքատ խավերին պետք է տրամադրվեն արժանապատիվ գոյության իրական սոցիալական երաշխիքներ: Դրանք պետք է տրամադրվեն նախևառաջ նրանց, ովքեր իսկապես, օբյեկտիվ հանգամանքների բերումով, ամեն ջանք գործադրելու դեպքում էլ, միևնույնն է, անկարող են ինքնուրույնաբար լուծել իրենց կենսական հիմնախնդիրները: Երկրորդ, անհրաժեշտ է ի հայտ բերել և պետական աջակցություն ցույց տալ բոլոր կարող ուժերին, ովքեր պատրաստ և ցանկանում են նվիրումով և հաստատակամորեն աշխատել, օգտագործել իրենց գիտելիքներն ու տաղանդը, սակայն դրա համար մեկնարկային պետական աջակցության կարիք ունեն: Ազգային ներուժի լիակատար օգտագործում՝ ահա Հայաստանի վերարդիականացման ազգային-ժողովրդավարական մոդելի գլխավոր բանաձևը: Երրորդ, պահանջվում է, որ հայրենի բիզնես-ընտրանին էապես բարձրացնի հայոց պետականության և ժողովրդի առաջ իր սոցիալական պատասխանատվությունը: Դա նշանակում է, որ խոշոր բիզնեսը, նախևառաջ, պետք է ապահովի մրցակցության պայմաններում աշխատողների առավելագույնս թույլատրելի բարձր աշխատավարձի մակարդակը, բարելավի աշխատանքի պայմանները, իրականացնի սոցիալական ծրագրեր և այլն: Այդ ամենը կարող է նպաստել խոշոր բիզնեսի սոցիալական ինտեգրմանը, պետության, խոշոր բիզնեսի և քաղաքացիական հասարակության փոխգործակցության միասնական կանոնների մշակմանը:

Վերլուծելով վերոնշյալ մոդելի հաստատման առաջնահերթությունները՝ պետք է առանձնացնել ուղղաձիգ շարժունության հստակ կողմնորոշիչների ձևավորման հիմնախնդիրը: Հարկ չկա հատկապես ապացուցելու, որ առանց «սոցիալական վերելակների» գործուն համակարգի ստեղծման անհնար է ապահովել տաղանդի, նախաձեռնության և աշխատասիրության պահանջարկվածությունը հայ հասարակության մեջ, միջին խավերից սերած առավել ակտիվ և մասնագիտորեն պատրաստված երիտասարդ կադրերի բնականոն հոսքը դեպի բարձր դիրքեր:

Կառավարման պետական համակարգում առաջացել է ուղղաձիգ շարժունության «կապուղիների խցանման» վիճակ: Դրա հաղթահարումը մենք կապում ենք ուղղաձիգ շարժունության սոցիալական չափանիշների ձևավորման հետ: Այս տեսակետից ուսանելի է Արևելյան Եվրոպայի որոշ երկրների փորձը, որտեղ փորձ է արվում հասարակական գիտակցության մեջ և պրակտիկայում արմատավորել մերիտոկրատիայի (վաստակի իշխանության) սկզբունքները: Իրական վաստակը, ներդրումը՝ սոցիալական կարգավիճակի, նյութական և բարոյական հատուցման հիմնական աղբյուրն է: Ըստ վաստակի՝ արժանապատիվ հատուցումը, տաղանդի, նախաձեռնության, աշխատասիրության և պարտաճանաչության հասարակական պահանջարկվածությունը պետք է դառնան Հայաստանում սոցիալական արդարության և, միաժամանակ, կառավարման համակարգից մասնագետների օտարվածության հաղթահարման ընդհանրական չափանիշը:

Մերիտոկրատիայի սկզբունքն անբաժան է խստագույն պատասխանատվությունից: Պետք է հասկանալ, որ եթե պետական պաշտոնյան ակնհայտորեն ձախողում է աշխատանքները՝ մնալով անպատիժ, դա ոչ միայն հիմնախախտում է ցանկացած իրավական և բարոյական արժեք, խոցում շարքային հայ քաղաքացու արդարության զգացումը, այլև նրան օտարում է պետությունից, նրա ինստիտուտներից: Անցումը մերիտոկրատիային կապված է մարդու վաստակի հատուցման ժամանակակից համակարգի ստեղծման հետ: Այդ տեսակետից թերևս ճիշտ կլիներ վերականգնել հանրապետական նշանակության թոշակները: Դրանք պետք է ունենան իսկապես անհատական բնույթ, իսկ սահմանման կարգը պետք է կարգավորել պետական օրենքներով:

Վերլուծելով սոցիալական արդարության սկզբունքների իրականացման առաջնահերթությունների և դրանց դրսևորումներից մեկի՝ եկամուտների տարբերակվածության աստիճանի իջեցման հարցը, առաջարկում ենք որպեսզի երկրի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, որ չափվում է ըստ գնողունակության պարիտետի, 2024 թվականին հասցվի մինչև 12 հազար դոլարի մակարդակին: Սկզբունքորեն այն թույլ կտա ոչ միայն ապահովել Հայաստանի բնակչության մեծամասնության կյանքի հարաբերականորեն բարձր ստանդարտ, այլև խթանել ժողովրդավարացման գործընթացները: Չպետք է մոռանալ, որ «ազգային կարկանդակի» չափազանց անարդարացի բաշխումը՝ մեծամասնության կյանքի բարելավման, ինչպես նաև իշխանություններից համակարգային օտարվածության մեղմացման գլխավոր խոչընդոտն է:

Ինչպես երբեք, այսօր Հայաստանում հրատապ է եկամուտների պրոգրեսիվ հարկման սկզբունքի ամրագրումը օրենսդրության մեջ և իրավակիրառական պրակտիկայում: Ընդսմին, այն պետք է օրգանապես համատեղվի բարեգործության նոր մեխանիզմների մշակման հետ, որոնք թույլ կտան հարկման պրակտիկայում լայնորեն օգտագործել սոցիալապես նշանակալի հիմնադրամներում կատարվող մուծումները: Անհրաժեշտ է նաև հետևողականորեն պայքարել սոցիալական պորտաբուծության դեմ՝ մեծ ժառանգություններ ստանալու դեպքում սահմանելով համապատասխան հարկ: Այդպիսի պրակտիկա գոյություն ունի նույնիսկ ամենաազատական հասարակություններում:

Եկամուտների սոցիալապես անընդունելի մակարդակի բարձրացման անհրաժեշտ նախադրյալներից է <u>միջին խավի համալրումը</u>, նրա վերածումն բազմաքանակ և հեղինակավոր քաղաքական ուժի: Դրա համար պահանջվում է միջին խավի մեջ մտնող խմբերի համար ապահովել եկամուտների առաջանցիկ աճ, որը թույլ կտա նոր թափ հաղորդելու ուղղաձիգ շարժունությանը և ձևավորելու սոցիալական հավակնությունների հարաբերականորեն արդարացի համակարգ: Միջին խավի բարձրորակ կրթությունը և մասնագիտական պատրաստվածությունը կդառնան հասարակական կյանքի առողջացման և զարգացման կարևոր գործոններ: Զարգացող երկրներում հենց այդ խավն է հանդիսանում պետության սոցիալական ամուր հենարանը, որը ոչ միայն որոշում է երկրում տիրող հասարակական մթնոլորտն, այլև ապահո-

վում է պետական ինստիտուտների գործունակությունն ու արդյունավետությունը:

Նիկոլ Փաշինյանի կառավարության մյուս անհետաձգելի քայլերից մեկը պետք է լինի բյուջետային ոլորտի աշխատողների նյութական դրության էական բարելավումը: Դա առաջընթաց կապահովի սոցիալական արդարության նորմերի հաստատման, ուղղաձիգ շարժունության արդյունավետ մեխանիզմների ստեղծման, բարձրագույն կրթության որակի և կարգավիճակի բարձրացման ոլորտներում: Այս կերպ կարելի է ոչ միայն պահպանել և ամրապնդել ներկայիս իշխանությունների լեգիտիմությունն, այլև փոխել կենսահույզ խնդիրների, ամենից առաջ զանգվածային աղքատության խնդրաշարի լուծման ռազմավարությունը:

Աղքատության հիմնախնդիրը մինչև այժմ լուծելու՝ իշխանությունների անկարողության պատճառներից մեկն այն է, որ սոցիալական քաղաքականության մեջ շեշտը դրվում է ավելի շատ անապահով խավերի սոցիալական պաշտպանության, տարատեսակ բյուջետային վճարումների տրամադրման վրա: Համոզված ենք՝ հարկավոր է նաև այդ խավերին ապահովել պետական այնպիսի աջակցությամբ, որ նրանք հնարավորություն ունենան գործնականում ինքնուրույնաբար լուծելու սեփական հիմնախնդիրները: Այդ գործում մեծապես կարևորվում են տարատեսակ կրթական և մասնագիտական որակավորման ծրագրերը: Դրանք հատկապես անհրաժեշտ են սոցիալապես խոցելի խավերի համար: Օրինակ, մեզանում վատթար դրության մեջ են միայնակ մայրերը, որոնք խնամում են հիվանդ երեխաների: Այստեղ չի կարելի սահմանափակվել միայն նպաստներով: Ավելի շուտ օգտակար կլինեին մասնագիտական ուսուցման ծրագրերը, որոնք ունեն պահանջարկ և համեմատաբար լավ վարձատրվում են: Նպատակահարմար է անապահով խավերին վարձակալության կամ լիզինգային կարգով տրամադրել անհրաժեշտ սարքեր և սարքավորումներ: Ինքնուրույն աշխատանքի պայմանների ստեղծումն այդպիսի կանանց քիչ թե շատ բարեկեցիկ կյանքի, նշանակալի սոցիալական կարգավիճակի և վերջին հաշվով՝ աճող սերնդի լիարժեք դաստիարակության գործուն երաշխիքներից է: Այս հնարավորությունը, անկասկած, ավելի օգտակար է, քան նպաստը: Հետևաբար, առավել արդյունավետ և նպատակահարմար է աղքատության պատճառների գործնական վերացումը, քան դրա հետևանքների գեղարարական «հարդարումը»:

Հասարակական արդարության սկզբունքների կենսագործման առաջնահերթություններից մեկը պետք է դառնա սոցիալական անհավասարության դեմ պայքարի ազգային ծրագիրը: Դրա մշակման ելակետը իշխանությունների և քաղաքացիական հասարակության լայն համագործակցությունն է՝ անհավասարության տարբեր տեսակների կառուցվածքի և մասշտաբների բացահայտման նպատակով: Դա, իր հերթին, թույլ կտա մշակել դրանց վերացման ազգային առաջնահերթությունների համակարգ, հստակեցնել բնակչության ուղղաձիգ շարժունության աջակցության ուղիները: Այդ ծրագրի կարևոր մասը պետք է կազմի Հայաստանի բնակչության սոցիալ-տնտեսական դրության մշտադիտարկման, ներառյալ՝ անհավասարությունների փորձագիտական

մշտադիտարկման կազմակերպումը: Դրա հիման վրա կմշակվեն համապատասխան անհավասարությունների հաղթահարման կոնկրետ նպատակային ծրագրերը:

Հայաստանի վերարդիականացման ազգային-ժողովրդավարական մոդելի կամ նախագծի կիրարկման հաջողության համար հարկավոր է այն, ինչը մեզ այդքան պակասել է վերջին տասնամյակներին՝ հայկական պետության և քաղաքացիական հասարակության հակադարձ կապը: Սակայն ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, Հայաստանում քաղաքացիական հասարակության մասը կազմող հասարակական կազմակերպություններին չի վստահում հարցվածների 42,8 տոկոսը:[6] Փոխադարձ անվստահության՝ հնուց եկող այդ հիվանդությունը, որը ժողովրդավարությունը վերածել է ծաղրապատճենման, կարող է բուժվել միայն մասնակցային ժողովրդավարության հասարակական ինստիտուտների զարգացման շնորհիվ: Միայն դա է Հայաստանի առաջ ծառացած հիմնախնդիրները լուծելու և սխոլաստիկ, կյանքից կտրված ու անպտուղ բանավեճերից խուսափելու լավագույն միջոցը: Դրանում է Հանրային խորհրդի առաքելությունը, թեև պետք է խոստովանել, որ այն երեկ և այսօր չի արդարացրել հայ հասարակության սպասումները: ՀԽ-ն այդպես էլ չի կայացել որպես քաղաքացիական հասարակության անկախ կառույց, այլ մինչև վերջերս վերածվել էր նախագահական ապարատի ինչ-որ անդեմ, խորհրդակցական կցորդի: Չի հաջողվել նաև խնդրահարույց հարցերի քննարկումներին լայնորեն ներգրավել հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև այդ քննարկումները փոխադրել լայն տեղեկատվական դաշտ, որը կդժվարացներ կյանքի աղաղակող փաստերի քողարկման հնարավորությունները կամ էլ, իշխանությունից օտարվածության այն ձևերը, երբ ամեն ինչ քննարկվում, մերկացվում է մամուլում, սակայն գործադիր իշխանության մարմինները դրանց բավարար ուշադրություն չեն դարձնում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը անձնապես շահագրգռված է կարևորագույն քաղաքական որոշումների քննարկման գործընթացներին լայն հասարակության ներգրավվածությունն ապահովելու խնդրով, քաջ գիտակցելով, որ ժողովրդավարական հասարակական ինստիտուտները կարող են ստեղծվել առանց զանգվածային մասնակցության, սակայն առանց զանգվածային մասնակցության և աջակցության ժողովրդավարությունը չի կարող գոյություն ունենալ:

«Նոր Հայաստանում» կենսականորեն անհրաժեշտ են հասարակական լայն բանավեճերը, որոնք ունեն գործնական ուղղվածություն: Դա նշանակում է, որ դրանց արդյունքում հասարակական նախաձեռնությունները պետք է դառնան պետական քաղաքականության կարևոր բաղադրիչը: Դրանց իրագործումը պետք է վերահսկվի քաղաքացիական հասարակության կողմից: Այսօր, ինչպես երբեք, պահանջվում է մշակել և ընդունել օրենքներ՝ Հանրային խորհրդի իրավական կարգավիճակի և հասարակական վերահսկողության մասին:

Վերլուծելով իշխանություն-քաղաքացիական հասարակություն գործակցության մեխանիզմները, հետևություն է արվում, որ այդ մեխանիզմները

պետք է այնպես կարգավորել, որպեսզի դրանք ճիշտ ժամանակին ընկալեն ու արտահայտեն հայ հասարակության մեծ խմբերի շահերը և ապահովեն դրանց փոխհամաձայնեցումը:

Այսօր համացանցում լայնորեն օգտագործվում է առաջարկությունների և անգամ օրինագծերի տեղադրման պրակտիկան: Յուրաքանչյուր քաղաքացի կարող է համացանց ուղարկել իր առաջարկությունը կամ օրինագծի ուղղումը: Օրինակ, Մեծ Բրիտանիայում դրանցից լավագույնները քննարկվում են խորհրդարանում, իսկ առանձին դեպքերում՝ հաշվի են առնվում օրինագծի ավարտական տարբերակի մեջ: Լավագույն լուծումների կոլեկտիվ ընտրության մեխանիզմը, այսպես կոչված, «կրաուդսորսինգը» լայն կիրառություն ուի Արևմուտքի երկրներում: Այստեղ իրացվում է, իրավաբանական լեզվով ասված, «պասիվ իրավունքը»՝ իշխանության, օրենսդրական նածաձեռնության սուբյեկտների կողմից ներկայացված այս կամ այն գաղափարին, օրինագծին արձագանքելու քաղաքացու հնարավորությունը: «Պասիվ իրավունքը» կարելի և անհրաժեշտ« է լրացնել «Ակտիվ իրավունքով», այսինքն՝ քաղաքացիներին ընձեռել իրավունք ձևավորելու խորհրդարանում օրենսդրական օրակարգը, առաջարկելու սեփական նախագծերը և ձևակերպելու ազգային առաջնահերթությունները: Հետաքրքիր է նշել, որ եթե Մեծ Բրիտանիայում այս կամ այն առաջարկությունը հավաքում է հարյուր հազար և ավելի ստորագրություն, այդ առաջարկությունը քննարկվում է երկրի խորհրդարանում: Եթե Հայաստանում ևս բրիտանական այդ պրակտիկան ընդունվի, ապա այն կառաջացնի իսկական «ժողովրդավարական հեղափոխություն»:

Մենք առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկել մեր քաղաքացիների այն առաջարկությունները, որոնք համացանցում կհավաքեն հիսուն հազար և ավելի ստորագրություններ: Այստեղից հետևում է, որ այդ քայլով Հայաստանում ինտերնետ-ժողովրդավարությունը կմիավորվի ուղղակի, հանրաքվեական ժողովրդավարության ինստիտուտների զարգացման, քաղաքացիների հասարակական-քաղաքական ակտիվության աճի գործընթացների հետ: Բացի այդ, առաջարկում ենք, որ կարևորագույն պետական որոշումների նախագծերը նախապես անպայման անցնեն, այսպես կոչված, «զրոյական ընթերցման» զտիչով, այսինքն՝ նախապես քննարկվեն Հանրային խորհրդում, խոշոր հասարակական կազմակերպություններում:

Իշխանություն-քաղաքացիական հասարակություն փոխադարձ անվստահության և օտարացածության հնուց եկող այդ հիվանդությունը կարող է բուժվել միայն իշխանության ինստիտուտների գործունեության թափանցիկության և բացության, հասարակական ուժերի անարգել և ազատ մրցակցության, արդյունավետ ժոքղովրդավարական ընթացակարգերի, իշխանություն-քաղաքացիական հասարակության հակադարձ կապի ամրապնդման մեխանիզմների, ազգային երկխոսության հիման վրա:

Ազգային լայն երկխոսության ընթացքում պետք է հայտնաբերել առավել ակտիվ և ազգայնորեն պատասխանատու խմբերի շահերի ընդհանրությունը Հայաստանի զարգացման առաջնահերթությունների հետ: Սակայն շահերի

ընդհանրությունը՝ անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ: Պահանջվում է այդ խմբերի գաղափարական և քաղաքական համախմբման հիման վրա նոր դաշինքի կամ, որ նույնն է, ազգային կոալիցիայի ստեղծում: Առավել նպաստավոր է այն սցենարը, ըստ որի նման համախմբման կենտրոնի և նախաձեռնողի դերում հանդես գա հանրաճանաչ ազգային առաջնորդ Նիկոլ Փաշինյանը: Եթե նրան հաջողվի տեղից շարժել ներազգային երկխոսության կազմակերպման գերխնդիրը, ձևակերպել իշխանություն-քաղաքացիական հասարակության ազգաշահ գործակցության նոր չափանիշներ, ապա դա կդառնա այն Ռուբիկոնը, որն ետևում կթողնի անհաշտելի դիմակայության դրսևորումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Երկիր» թերթ, 31.01.2001 թ.
2. **Осипов В.**, Выборная демократия: политическая функция НПО. В. сб.: Выборы и демократия: фактор гражданского общества.- Ереван, 2003, էջ 65
3. **Погосяч Г. А.,** Современное армянское общество: особенности трансформации. М., Academia. 2005, էջ 137-138
4. **Осипов В.,** Выборная демократия: политическая функция НПО, էջ 66
5. **Погосян Г. А.,** Современное армянское общество: особенности трансформации, էջ 311
6. **Осипов В.,** Выборная демократия: политическая функция НПО. В сб.: Выборы и демократия: фактор гражданского общества. – Ереван, 2003, с.66

МАНУК АРУТЮНЯН

доктор философских наук, профессор

БОЛЬНОЕ ОБЩЕСТВО: ОТ ДИАГНОСТИКИ ДО СТРАТЕГИИ ОЗДОРОВЛЕНИЯ

Статья посвящена концептуальному анализу системного отчуждения армянского общества. Раскрыта та неоспоримая реальность, что при прежних властях настроения политической отчужденности распространялись не только на исполнительную, законодательную и судебную власти, но и на основные партии, общественные организации. Для их преодоления автор разработал и выдвинул новую логику или проект восстановления или, что то же самое, оздоровления Армении. То есть национально-демократическая модель возрождения Армении, полностью ориентированная на ценности патриотизма, демократии и социальной справедливости, указывает на важную роль новых властей Армении в деле их утверждения. Реализация модели предусматривает целую систему мероприятий по оздоровлению армянского общества.

MANUK HARUTYUNYAN

Doctor of Philosophy, Professor

SICK SOCIETY: FROM DIAGNOSIS TO RECOVERY STRATEGY

The article reveals the conceptual analysis of the systemic alienation of the Armenian society. Disclosed is the undeniable fact that under the previous regime sentiment of political estrangement applied not only to the executive, legislative and judicial authorities but also to the main parties and public organizations. To overcome them, the author has developed and

launched a new logic or project for Armenia's 'recovery', or normalization. In other words, the national-democratic model of Armenia's revival, fully focused on the values of patriotism, democracy and social justice, points to the important role of the new Armenian authorities in their establishment. The implementation model provides a whole system of measures for the improvement of the Armenian society.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 04.02.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 10.04.2019թ., ընդունվել է տպագրության 17.04.2019թ.:

ՀՏԴ 050(479.75)

ՏԻԳՐԱՆ ՋԱՐԳԱՐՅԱՆ
տեխնիկական գիտությունների թեկնածու
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԸ

Համառոտագիր

Հայ պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերը հարուստ տեղեկատվական շտեմարաններ են, որտեղ ներկայացված են սկզբնավորումից (1794թ.) ի վեր լույս տեսած պարբերական հրատարակությունները՝ մատենագիտական մանրամասն նկարագրությամբ, պահման վայրով, հաճախ պարբերականի պատկերով և, որ ամենակարևորն է, տեղեկատվական-վիճակագրական բաղադրիչով: Համահավաք մատենագիտությունների օժանդակ ցանկերի հիման վրա հնարավոր է արտածել վիճակագրական տեղեկություններ պարբերական հրատարակությունների քանակների մասին՝ աշխարհի տարբեր երկրներում, քաղաքներում, որոշակի ժամանակաշրջաններում և այլ կտրվածքներով: Համահավաք ցանկերում տվյալներ կան նաև նույն պարբերականի՝ քաղաքից քաղաք, երկրից երկիր, աշխարհամասից աշխարհամաս տեղաշարժերի մասին՝ պայմանավորված պատմաքաղաքական, ժողովրդագրական և այլ պատճառներով: Ժամանակակից տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ծրագրային հնարավորությունները գերազանց պայմաններ են ստեղծում արագ, որակյալ, արժանահավատ ու բազմադաշտ տեղեկատվություն ստանալու պարբերական հրատարակությունների մասին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *հայ մամուլի մատենագիտություն, էլեկտրոնային շտեմարաններ, մամուլի թվայնացում, վիճակագրություն*

Առաջին հայկական պարբերականները սկիզբ են առել և հրատարակվել ներկա ՀՀ տարածքից դուրս: 1794-96թթ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում է հրատարակվել Հարություն Շմավոնյանի խմբագրությամբ հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը»: Իսկ ՀՀ ներկայիս տարածքում Սիմեոն Երևանցու տպարանի բացումից (1771թ.) մոտ մեկ դար անց և առաջին պարբերական «Ազդարարի» հրատարակումից 74 տարի անց Վաղարշապատում 1868թ.